

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(առարկա)

ԹԵՄԱ Ուսուցման նախագծային մեթոդի կիրառումը
աշխարհագրության դասավանդման մեջ

Կազմեց՝ Գարեգին Գաբրիելյան Կառլենի
(անուն, ազգանուն, հայրանուն)

Ձագիկավանի միջնակարգ դպրոց
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Գ. Հայրապետյան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Ուսուցման նախագծային մեթոդի առավելությունները
3. Ուսումնական նախագծերի դասակարգումը
4. Ուսուցման նախագծային (հիմնախնդիրների) մեթոդի կիրառման կարելիությունը աշխարհագրության դասերին
5. Դժվարություններ եվ խոչընդոտներ
6. Աղբյուրներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթական համակարգում արմատական բարեփոխումները վկայում են, որ ուսուցման պահանջվող որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է ուսուցման նորագույն մեթոդների կիրառումով: Գաղտնիք չէ, որ ուսուցման ավանդական մեթոդները, ավելի ճիշտ՝ գիտելիքներ սերտել տալու մեթոդներն այսօր չեն կարող ապահովել ուսման որակ և ստեղծարար կարողությունների զարգացում: Դասավանդողներն այսօր ուսուցման մեթոդների ընտրության մեծ հնարավորություններ ունեն: Խնդիրն այն է, թե մենք որքանով ենք տիրապետում ուսուցման ժամանակակից մեթոդներին, ուսուցման նպատակով մեր կողմից ընտրված կամ արդեն կիրառվող մեթոդները որքանով են համապատասխանում մեր դասավանդած առարկաների ուսումնական նպատակներին:

Նախագծերի մեթոդը (Project methods) ուսուցման համակարգ է, որի ընթացքում սովորողները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում: Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նոր երևույթ չէ: Այն առաջին անգամ նկարագրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում կրթական բարեփոխումների շրջանում, ինչի արդյունքում կրթությունը դարձավ աշակերտակենտրոն: Հետագայում այն լայն տարածում ստացավ եվրոպական երկրներում: Մեթոդի ի հայտ գալը կապվում է Ջոն Դյուիի անվան հետ, երբեմն անվանում են նաև **հիմնախնդիրների** մեթոդ:

Նախագծերի մեթոդը իր նշականությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, այն 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսուցման գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում, տեխնոլոգիա է, որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ: Նախագծերն իրականացնելիս ուսումնառությունը պետք է կազմակերպվի սովորողների նպատակային գործունեության միջոցով, ընդգծվի սովորողների կապը կյանքի հետ, ուսումնասիրության հիմնախնդիրները լինեն իրական կյանքից: Այս դեպքում անպայման կապահովվեն սովորողների հմտությունների, կարողությունների զարգացումը, տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու, քննադատական մտածողության զարգացումը: Փորձն ապացուցում է, որ նախագծային մեթոդը իրագործելու դեպքում սովորողները կարողանում են աշխատել ընկերների հետ, կոնկրետ այս կամ այն հիմնախնդիրը լուծելու համար կիրառել տարբեր ոլորտներից ձեռք բերած իրենց գիտելիքները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսուցման նախագծային մեթոդը ենթադրում է ուսումնական գործընթացի այնպիսի մոդելավորում, երբ սովորողները որոշակի տևական ժամանակահատվածում աշխատում են մարդկանց, հասարակությանը հուզող կենսական կարևոր հիմնախնդիրների շուրջ, ձեռնամուխ լինում իրական, արդիական հիմնահարցերի ուսումնասիրման գործին:

Աշակերտները սովորում են հետազոտություններ կատարել, աշխատել մեդիաաղբյուրների, տեքստային, թվային և գրաֆիկական տվյալների հետ,

կողմնորոշվել տեղեկատվության ծովում, հավաքել, վերլուծել և գնահատել հիմնահարցին առնչվող տարաբնույթ տեղեկություններ, կազմակերպում են հարցազրույցներ, հանդիպումներ խնդրով շահագրգիռ տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ:

Ուսումնական նախագծային մեթոդը ստեղծում է ուսումնական այնպիսի միջավայր, որտեղ խրախուսվում և խթանվում են խմբային աշխատանքը և համագործակցությունը: Ուսումնասիրություններ կատարելիս սովորողները բաժանվում են խմբերի: Ընդհանուր նպատակին հասնելու համար խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ, փոխանակում են տեղեկություններ և կարծիքներ, մծակում են քայլեր, ապահովում են հետադարձ կապ, կրում անհատական պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, ածակերտների միջև ձևավորվում է հանդուրժողականություն և փոխադարձ վստահություն: Շատ կարևոր է նաև, որ նախագծային աշխատանքի ավարտին աշակերտներն ունենում են իրական, շոշափելի արդյունքներ:

Ուսումնական նախագծային աշխատանքն ապահովում է հավակնոտ հիմնահարցերի՝ որոշակի տևական ժամանակահատվածում բազմակողմանի և բազմատեսակ, համալիր և համապարփակ հետազոտություն, գործնական բնույթի աշխատանք: Սա էլ նպաստում է սովորողների՝ ուսումնական նյութի բովանդակության առավել խոր յուրացման, համապատասխան իրավիճակներին արդյունավետորեն և պատշաճ արձագանքելու կարողությունների և հմտությունների զարգացման, ժամանակակից կյանքի մարտահրավերներին դիմակայելուն ուղղված արժեհամակարգի ձևավորմանը:

Այսպիսով՝ ուսումնական նախագծային աշխատանքների կազմակերպումն ու խրախուսումը լավագույնս է նպաստում 21-րդ դարի հմտությունների՝ ուսումնառության, գրագիտության և կյանքի հմտությունների ձևավորմանը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Գոյություն ունեն ուսումնական նախագծերի մի քանի դասակարգումներ: Այս աշխատանքում կներկայացնենք դրանցից մեկը՝ ռուս մանկավարժ, գիտնական Ե. Ս. Պոլատի դասակարգումը, որն, իր տեսակի մեջ, ամբողջական է ու համակարգային:

Նախագծերի տեսակները՝

1. Ըստ նախագծում գերակշռող գործունեության տեսակի.

- Հետազոտական

Այս տեսակը ամբողջությամբ կամ համարյա ամբողջությամբ ենթակա է գիտական հետազոտության տրամաբանությանը: Ծրագրի մշակումը ենթադրում է հետևյալ գործողությունները. խնդրի և դրանից բխող հետազոտական առաջադրանքներ սահմանում (կարելի է կիրառել «ուղեղային գրոհի», «կլոր սեղանի» մեթոդի կիրառում), դրանց լուծման վարկած առաջ քաշում. վերջնական արդյունքների ձևավորման ուղիների քննարկում (ներկայացումներ, պաշտպանություն, ստեղծագործական զեկույցներ, տեսակետներ և այլն), ստացված տվյալների հավաքագրում, համակարգում և վերլուծություն, արդյունքների ամփոփում, գրանցում, դրանց ներկայացում, եզրակացություններ, նոր հետազոտական խնդիրների խթանում:

- Ստեղծագործական

Նման նախագծերը, որպես կանոն, չունեն մանրամասն մտածված կառուցվածք, այն միայն ուրվագծվում և հետագայում մշակվում է՝ ենթարկվելով ծրագրի մասնակիցների տրամաբանությանը և շահերին: Ստեղծագործական նախագծերը պահանջում են արդյունքների համապատասխան ձևակերպում: Այս դեպքում անհրաժեշտ է համաձայնեցնել պլանավորված արդյունքները և դրանց ներկայացման ձևը (համատեղ թերթ, շարադրություն, տեսաֆիլմ, դրամա, տոն և այլն): Ծրագրի արդյունքների ձևավորումը պահանջում է լավ մտածված կառուցվածք՝ տեսաֆիլմի սցենարի, տոնական ծրագրի, էսսեների պլանի, ռեպորտաժի, թերթերի ձևավորման և վերնագրերի, ալբոմի, սպորտային խաղի, արշավախմբի տեսքով, և այլն:

- Դերային-խաղարկային

Մասնակիցները ստանձնում են որոշակի դերեր՝ պայմանավորված նախագծի բնույթով և բովանդակությամբ: Սրանք կարող են լինել գրական կերպարներ կամ գեղարվեստական կերպարներ, որոնք ընդօրինակում են սոցիալական կամ գործնական հարաբերությունները՝ բարդացած մասնակիցների կողմից հորինված իրավիճակներով: Այս նախագծերի արդյունքը կա՛մ ուրվագծվում է դրանց իրականացման սկզբում, կա՛մ ի հայտ է գալիս միայն ամենավերջում: Այստեղ ստեղծագործելու աստիճանը շատ բարձր է, բայց գերիշխող գործունեությունը դեռևս դերախաղն է, արկածայինը:

- Տեղեկատվական

Այս տեսակի նախագծերն ի սկզբանե ուղղված էին ինչ-որ օբյեկտի, երևույթի մասին տեղեկություններ հավաքելուն: Ենթադրվում է նախագծի մասնակիցներին ծանոթացնել այս տեղեկատվությանը, դրա վերլուծությանը և լայն լսարանի համար նախատեսված փաստերի ընդհանրացմանը: Նման նախագծերը հաճախ ինտեգրվում են հետազոտական նախագծերին և դառնում դրանց անբաժանելի մասը: Նման նախագծի կառուցվածքը կարելի է նշել հետևյալ կերպ.

Նախագծի նպատակը -> տեղեկատվության որոնման առարկա -> տեղեկատվության քայլ առ քայլ որոնում միջանկյալ արդյունքների նշանակմամբ -> վերլուծական աշխատանք հավաքագրված փաստերի վերաբերյալ -> եզրակացություններ ->

- Գործնական-կողմնորոշիչ

Նման նախագիծը պահանջում է լավ մտածված կառուցվածք, նույնիսկ սցենար իր մասնակիցների բոլոր գործողությունների համար՝ նրանցից յուրաքանչյուրի գործառույթների սահմանմամբ, հստակ արդյունքներով և յուրաքանչյուրի մասնակցությամբ վերջնական արտադրանքի նախագծմանը: Այստեղ հատկապես կարևոր է համակարգման աշխատանքների լավ կազմակերպումը փուլ առ փուլ քննարկումների, համատեղ և անհատական ջանքերի ճշգրտման, ստացված արդյունքների ներկայացման և դրանք գործնականում կիրառելու հնարավոր ուղիների, համակարգված արտաքին գնահատման կազմակերպման առումով: Նախագծի: Կարևոր է նաև, որ խմբերի աշխատանքի արդյունքները տեսանելի և հասանելի լինեն բոլոր ունկնդիրներին: Դրանց հղումը մեծապես կօգնի ձեր սեփական նախագծի հետագա պլանավորմանը: Քննարկումն ամփոփելու համար

դուք կարող եք խնդրել հանդիսատեսին ընդգծել նախագծի հիմնական բառերը (աշխատում է ամբողջ խումբը):

2. Առարկայական- բովանդակային.

Մոնո կամ առարկայական նախագծեր

Իրականացվում է մեկ ուսումնական առարկայի աշխարհագրության բովանդակության շրջանակներում: Հետազոտության համար հիմնախնդիր ընտրվում է ուսումնական առարկայի առավել նշանակալի ու բարդ թեմաներից: Իհարկե, նախագծի շուրջ աշխատանքի ընդացքում հնարավոր է գիտելիքներ ներգրավել նաև այլ ուսումնական առարկաներից: Այսպիսի նախագծերը նույնպես պետք է իրականացման փուլերի հստակ կառուցվածք ունենան: Առարկայական նախագիծը ենթադրում է աշխատանք խմբերով՝ յուրաքանչյուր աշակերտի դերի սահմանմամբ, ընդ որում, դերերի բաշխումը և վերջնարդյունքների ներկայացման ձևը ընտրում են աշակերտները:

Միջառարկայական

Այսպիսի նախագծերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն իրականացնելու համար աշակերտը պետք է անհրաժեշտ գիտելիքների պաշար ունենա մի քանի, երբեմն ոչ ոլորտային, առարկաներից: Սրաք իրականացվում են, որպես կանոն, դասերից հետո: Ժամանակի առումով երկարատև են, պահանջում են իրականացման փուլերի և քայլերի հստակ կառուցվածք, առաջադրանքների կոնկրետություն, աշակերտների գործողությունների ճիշտ, որակյալ համակարգում, բոլոր խմբերի ներդաշնակ աշխատանք:

4. Սովորողների քանակի.

Անհատական

Նախագծայի աշխատանքը իրականացնում է մեկ աշակերտ, կամ երկու աշակերտներ տարբեր դասարաններից:

Զույերով

Աշխատանքը իրականացնում են միևնույն դասարանի երկու աշակերտ

Խմբային

Երբ նախագծի իրականացման համար անհրաժեշտ է կազմակերպել խմբեր, որոնք համախմբված են ընդհանուր նպատակի շուրջ, բայց ունեն դրանց հասնելու համար տարբեր առաջադրանքներ:

5. Ժամանակային.

Կարճաժամկետ

Իրականացվում են մեկ առարկայի բովանդակային ոլորտների շրջանակներում, 3-5 դասերի ընթացքում:

Միջնաժամկետ և երկարաժամկետ

Միջնաժամկետ (մեկ շաբաթից մեկ ամիս) և երկարաժամկետ (մեկ ամսից մինչև մի քանի ամիս) նախագծերը, որպես կանոն, մշտապես ակն են լինում և ենթադրում են հետազոտություններ, ակտուալ, գործնական նշանակություն ունեցող թեմաներով: Այս նախագծերը հաճախ իրականացվում են դասերից հետո և կարող են մաս դառնալ արտադասարանական ուսուցման:

*** Այլ դասակարգումներ ևս կան, օրնակ՝ ավստրալիացի նովելագիր, ծրագրավորող Սայմոն Հայնեսի դասակարգումը.*

Տեղեկատվական կամ հետազոտական նախագծեր (Information and Research projects)

Ուսումնասիրություն-նախագծեր (Survey projects)

Արտադրական նախագծեր (Production projects)

Դերային խաղ և դրամատիկ ներկայացում նախագծեր (Performance and Organisational projects):

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ (ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ) ՄԵԹՈԴԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Հանրակրթական պետական նոր չափորոշիչը կարևորում է միջառարկայական կապերի ձևավորումը և ձևակերպում է ուսումնական առարկաների խաչվող հասկացությունները:

Այս առումով «Աշխարհագրություն» ուսումնական առարկան առանձնանում է մյուս առարկաներից իր մի շարք յուրահատկություններով: Աշխարհագրությունը՝ որպես գիտություն, բնական և հասարակական գիտությունների համակարգերի փոխադարձ շփման միջակայքում է և սերտորեն կապված է դրանցից յուրաքանչյուրի հետ: Նրա բովանդակությունը լավագույնս է համապատասխանում նախագծային ուսուցման էությանը. այն հնարավորություն է տալիս ինտեգրվել ուսումնական առարկաների մեծ մասի բովանդակության հետ, միավորել տարբեր ոլորտների գիտելիքները, բացահայտել պատճառահետևանքային կապերը, գտնել ի հայտ եկեղ հարցերի պատասխանները, գործնականում կիրառել նախագծային հետազոտության արդյունքները:

Ժամանակակից աշխարհագրության ուսումնասիրության առաջնային ոլորտը «հասարակություն – բնություն», «հասարակական և բնական աշխարհակարգեր» կապերը, փոխհարաբերություններն ու փոխազդեցություններն են, դրանց հետևանքով ձևավորված և կանխատեսվող կենսամիջավայրը: Մարդկության ժամանակակից հիմնախնդիրների մի մասը (էկոլոգիա, բնապահպանություն, ժողովրդագրություն, տարածքային կազմակերպում և այլն) սերտ առնչություն ունեն աշխարհագրության հետ:

Աշխարհագրության դասընթացում բավականին մեշ ուշադրություն է դարձվում բնապահպանական հիմնախնդիրներին: Այդ հիմնախնդիրները կենսական

նշանակություն ունեցող հիմնահարցեր են, որոնց արդյունավետ լուծումից կախված են մարդկության ապագան, նրա հետագա արդյունավետ զարգացման ընթացքը, դրանք առկա են, ուսումնասիրվում և քննարկվում են ուսումնական տարբեր առարկաների շրջանակներում: Այս տեսակետից ևս ուսումնական նախագծային աշխատանքը հրաշալի տարբերակ է էկոլոգիական երևույթներն ու բնապահպանական գաղափարները, ուսումնական բովանդակությունը տարբեր գործողությունների միջոցով խոր, բազմաշերտ և համապարփակ ուսումնասիրելու և յուրացնելու համար: սովորողը հնարավորություն է ստանում ուսումնասիրվող երևույթին, հիմնահարցին անդրադառնալու մի քանի անգամ, սակայն ամեն անգամ՝ նոր կողմից, նոր տեսանկյունով, հրականացնելով ուսումնական տարբեր գործողություններ:

Անմիջականորեն առնչվելով իրական կյանքին և շոշոփելով արդիական, խնդրահարույց թեմաներ՝ նախագծային աշխատանքները նաև խիստ գրավիչ են ու հետաքրքիր սովորողների համար, ինչն էլ ավելի լայն հնարավորություններ է ընձեռում բոլոր սովորողների՝ այդ աշխատանքներին ակտիվ մասնակցության ու ներառման՝ նրանց կրթական կարիքներին, հետաքրքրություններին և հնարավորություններին համապատասխան:

Ուսումնական նախագծային աշխատանքները ներառական կրթություն իրականացնելու հիանալի միջոց են, քանի որ նախագծային ուսուցման պրակտիկայի յուրաքանչյուր տարր ուղղված է ուսումնառության առավել ներգրավող և դինամիկ միջավայրի ստեղծմանը բոլոր աշակերտների համար՝ բացառելով ցանկացած խտրականություն:

Հայտնի է, որ գիտելիքներն ու գաղափարները ավելի արագ ու հեշտությամբ են ձևավորվում, քան դրանց գործնական կիրառությունը և մարդու վարքագիծը: Աշակերտները հաճախ գեղեցիկ մտքեր են արտահայտում, խելացի դատողություններ անում տարբեր թեմաներով, բերում հիմնավոր փաստարկներ,

համարժեք գնահատում իրողությունները, սակայն երբ հարկավոր է լինում դրանք կիրառել և ցուցադրել որոշակի օրինակով, հաճախ դժվարանում են: Այստեղ բախվում ենք լուրջ խնդրի՝ գիտելիքը կյանք փոխադրելու, փոխանցելու խնդրին: Այս խնդրին ինչ-որ ձևով լուծում տալու լավագույն տարբերակը գործելու, անելու միջոցով սովորելն է, ինչն էլ ապահովվում է նախագծային աշխատանքի մեթոդի կիրառումը:

ԴժՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Դպրոցներում նախագծային աշխատանքների արդյունավետ իրականացման համար կան նաև որոշ դժվարություններ և խոչընդոտներ: Օրինակ՝ աշակերտների և ուսուցիչների ժամանակային ծանրաբեռնվածությունը, ուսուցիչների՝ այդ մեթոդով աշխատելու պատրաստվածության և մոտիվացիայի պակասը, վերապատրաստող մասնագետների պակասը, համապատասխան մշակումների, գնահատման սկզբունքների և չափանիշների բացակայությունը, դպրոցների թույլ կարողությունները:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Петрова Е.Ю. Современные технологии в обучении географии, – Томск :
Изд-во ТГПУ, 2018

2. Новые взгляды на географическое образование: Пособие ЮНЕСКО, М.:
Прогресс, 1986

3. Կլիմայի փոփոխություն. Ինչպես իրականացնել ուսումնական նախագծա-
յին աշխատանքներ: Ձեռնարկ ուսուցիչների համար/ Կ. Հարությունյան, Հ.
Խաչատրյան/ ՅՈՒՆԻՍԵՖ, Ավստրիայի զարգացման գործակալություն/ Երևան
2021

4. <https://elenasargsyan.wordpress.com>

5. <https://lib.armedu.am>